

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعة علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՂԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 35

1898 ՆՈՅԵՄԲԵՐ 21

Ամեն Տեղի համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, Վեցամսեայ 26 իսկ եռամսեայ, 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթատարի ծախքը հմբագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բոլ ալ կ'ընդունուի 100 դրուցի յետ 105 դրուց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԼՈՒՋ.—Ձմեռը:

Գ. ՏԵՎԷՃԵԱՆ.—Ներկարարութիւնը:

Մ. Կ. ՄԱՂԱՔԵԱՆ.—Տեսական եւ Գործնական Երկրագործութիւն. Օդերեւութաբանութիւն:

Ղ. ԲՈՂԱՏ.—Երկի շինելու Արհեստը, Հարցում եւ պատասխան:

ՄԻՀՐ.—Առողջապահական, Գէշ ստամոքս մը:

Ղ. ԲՈՂԱՏ.—Շէրամաբուծութիւնը Բասթօռեան դրութիւնով, Մակարուծային հիւանդութիւններ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.—Հանրագիտակի վայելչադարդութեան բաժինը:

ՄԻՀՐ.—Որովայնախօսութիւնը կամ որովայնախօս ըլլալու գործնական միջոցներ:

ՄԱՂԱՔԵԱՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ:

Տ. ՊՈՉԱՃԵԱՆ.—Գիտական Խնդիրներ:

Հանելուկ, Ազգ եայլն:

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ - Ալի ճառտէսի, Թիւ 4

1	2
.	
.	
.	
6	3
.	
.	
.	
5	4

1. Տան մը մէկ մասը .
 2. Էտիրնէի կուսակալութեան մէջ քաղաք մը .
 3. Եկեղեցական մոյրեցուցիչ մը .
 4. Անուանի պատկերհանի մը անուն .
 5. Երկիր մը յ'Աւստրիա .
 6. Հիւանդութեան մը անուն .
 7. Քաղաք մը ի Ֆրանսա .
- Երբ առաջին գրերը կարդանք 1—5 պիտի գտնենք աշխարհիս հինգ մասերէն մին իսկ երբ խաչաձև կարդանք, պէտք է գտնել 2—4 Հռոմէացի անուանի զօրապետի մը անունը և 6—3 երեւելի պատկերհանի մը անուն .
- Պէշիկթաշ Բ . Պ . 2 .

ԲԱՆԱՍԻՐՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Հ . Ս . Տէրվիչեանի ՀՆՏԵՒՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱԼԵԶՈՒ անուն գրքին ու ԼԵԶՈՒ հանդէսին ամբողջական հաւաքածոյին պէտք ունեցող բանասէրներն ու գրասէրները կրնան խմբագրութեանս գիմել . Աւելորդ է հոս առաջ բերել այդ երկու հեղինակութեանց արժէքը . ամէն բանասէրի ու գրահմուտի համար անհրաժեշտ գործեր են .

Գիները խիստ դիւրամատչելի են . փութացէ՛ք առիթէն օգտուիլ մինչև մէկ ամիս , որովհետև օրինակները սպառած են :

Ածող է այս վանկըդ առաջին ,
Եկած ես աշխարհ աքլորին իբր կին ,
Թէ երկու իմաստ ունիս իբր բառ
Աշխարհաբառ ես ո՛չ թէ գրաբառ :

Երկրորդ վանկիդ բայըն է կըթել .
Կովեր ու այծեր , մեղու չկըթել
Կ'ըսես ճերմակ եմ , ներկեմ , այլ ինչե՛ր .
Կարմիր հաւկիթի տօնը չե՞ս յիշեր :

Քո հանելուկը ՀԱԿԻԹ չէ՞ , Գեղա՛մ ,
Ուրիշ բառ կ'ուզես որ գլխուդ տեղամ :
Հարցում մ'ալ ես քեզ , զոր շատեր գիտեն ,
Հաւկիթն է հաւէն թէ հաւն հաւկիթէն :

ՎԱՀԷ

Լուծած են նաև ,
Տկն . Ա . Գ . Քիւրտեան , Իզմիտի Գայի-
անեան Վարժարանի ուսուցչուհի . — Օր . Պ .
Պ . Պ . — Յ . Շէլէֆեան . — Յ . Արայճեան և
Ե . Յ . Էթմէքճեան՝ Գարթալէն :

ՏՔԴ . Բ . ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԿՆԱՍՏԱԲՈԾԺ , ՄԱՄԱԳԷՏ

ՉՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Որ իր երկար փորձառութեամբ ծանօթ է , մի քանի տարիէ ի վեր ուսումնասիրութիւններ կատարելէ զկնի ի Բաւրիզ , դարձած է մայրաքաղաքս , հաստատելով իր բնակութիւնը Բերա Մէթէպ-Պայրամ-Փողոց , Թիւ 29 , ուր ամէն օր կէս օրէ վերջ հիւանդ կ'ընդունի : Մասնաւորապէս կ'դարմանէ կնոջական և ջղային ամէն հիւանդութիւններ : Ե՛ւ , նոյն ժամուն ձրի կը դարմանէ կարօտեալները : Ելեքտրաբուժում ամէն տեսակներով , մասնաւոր քննութիւն Ռէօնթկէնեան մեքենայով :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՐԱՍԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Դ. ՌՈՒԱՑ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 35

1898 ՆՈՅԵՄԲԵՐ 21

ՁՄԵՌԸ

Այս խորագրին տակ չկարծէք թէ բանաստեղծական թռիչ մը պիտի առնենք գուժելով բնութեան ողբարբը ծառերու շիկնումին մէջ։ Մեր տեսակէտը տարբեր է. ներքին բնութիւնը շատ աւելի անհուն է արտաքինէն. փոքրիկ տիեզերք մը հեացող, ուր յոյզեր կան պէսպէս. կարմիրիներ՝ անպատկառ արարքներէ ետք։ Որքան ալ լաւատես ըլլանք, չենք կարող չգանգատիլ քուրջերու տակ դողդոջուն սա՛ դժբախտին վիճակին վրայ՝ որ ընկերութեան արատն է։

Հարուստը իր հաստ վերարկուն մէջ ամփոփուած, եկեղեցականը կրօնական հինցած խնդիրներով զբաղած, փաստաբանը իր դատին պաշտօն, բժիշկը այցելութիւնները շատցնելու դիտումով առաջ կ'երթան կենսական մրցումին մէջ։ Ընչ փոյթ թէ տառապողներ կան, ու չոր հացի կարօտ ընտանիքներ. «ես»ին եւ «ուրիշ»ին մէջ անդունդ մը կայ, ինչպէս կ'ըսէ Զիլինկիրեան։

Կ'հարցնեմ ինքնին. արդեօք դրական դարս մէջտեղ հանեց անդգաներու եւ անտարբերներու դասակարգ մը, ու կը թզթատեմ դրական իմաստասիրութեան էջեր, ուր կ'տեսնեմ թէ ընկերսիրութիւնը գլխաւոր դաւանանք մըն է. հոս պարտք եւ իրաւունք չեն ջնջուած, որ փոխէն ալ առաջ են։ Ո՛չ բարոյականը, ո՛չ օրէնսդիտութիւնը եւ ո՛չ տնտեսագիտութիւնը ընկերական բարօրութեան կ'ընդդիմանան. աւելին կայ. անոնց ծնունդն է այդ ծաղիկը՝ ուրկէ երջանկութեան բոյրեր կ'սփռուին։

Իայց ծայրայեղ անհատականութեան մէջ սուղած մարդը չուզեր հետաքրքրուիլ իր եղբայրով. կ'ընէ ինչ որ օգտակար է իրեն՝ չնայելով գործածած միջոցներուն. եւ զարմանալին ո՛րն է գիտէ՞ք, այսպիսին կ'ընչուի «գործնական»։ Կ'ապրինք դարու մը մէջ, ուր բառերն ալ իրենց նախնական իմաստէն կ'հեռանան ու կ'պատշաճին մեր քմահաճոյքներուն։

Միջավայրի ու խառնուածքի հարցեր դեմերնիս կ'ենեն. եւ ասով կ'բացատրուին ըմբռնումներու աճնքան տարբե-

լուծիւնները: Ուրեմն երկարատե դի-
տելու է հասարակութիւնը՝ որուն կը
պատկանինք. իր վէրքերը մօտէն շօշա-
փելու է ճշմարիտ դարման մը տանելու
համար:

Թող փարթամը ըմբռնեն պերճա-
փառ. ասոր ըսելիք չկայ. սակայն ինչ
կ'ըլլայ երբ ուրիշներն ալ մտածէ. այն-
պէս կ'կարծուի որ շահեկան առաջարկի
մը իրագործման ամենէն աւելի ինք պի-
տի աշխատի. բայց ընդհակառակն: Մինչ-
դեռ ասդին խղճամիտ գիտնականը իր
անձնական հոնգիսաւ մոռցած կ'ընէ
ոսկի ժամեր իր նմաններուն: Բոլոր մը
կ'ելլէ ժողովուրդին ապագային համար
սքանչելի ձեռնարկ մը կ'ընէ մասնագի-
տական թերթ մը հաստատելով, ու չի
քաջալերուիր...: Եթէ բարերարներ հա-
ճէին գաւառի աղքատ վարժարաններուն
մէջմէկ օրինակ նուիրել, թէ՛ աշխատու-
թիւն մը կ'վարձատրուէր և թէ մանուկ
սերունդ մը կ'տեղեկանար գիտական ու
արհեստական ծանօթութեանց: Տեղը ե-
կած ատեն չենք քաշուիր ըսելու. «Այո
ինչ վերացական դաստիարակութիւն մը
կ'տրուի աղքատ», և երբոր տարբեր ուղ-
ղութիւն մը տալու միջոցներուն վրայ
գործնականապէս կ'խորհուի, անկիւն մը
կ'կծկտինք ու ամէն կերպով կ'շա-
նանք արգիլել գործին առաջխաղա-
ցումը: Ամէնքնուս ըրածն ալ այս չէ՞,
և ասոր համար չէ՞ որ բան մը տեական
չըլլար մեր մէջ. նախանձը կ'փտեցնէ մեր
զգացումները. և ասկէ կ'տուժեն մեր
փոքրերը: Տեսակ մը կատակերգութիւն
կ'խաղանք, որ ողբերգութեամբ պիտի
վերջանայ: Գործնական, ճշմարիտ գործ-
նական մարդը ուրիշ ընթացք պիտի
բռնէր. սիրով պիտի համակրէր լաւա-
գոյն տենչ ունեցողներուն: Այսօր ընդ-
հանուր փափաք մը կայ գիտութեան.
Տորթ. Տաղաւարեանի Մանրէաբանու-
թիւնն ու Առողջապահութիւնը ցնծա-
գին ընդունուեցան. Հանրագիտակը կը
սիրուի. ըսել է գիտական շարժումի ըն-

դունակ կ'երևնայ ամէն ոք: Ի՞նչ կեր-
պով եղաւ այս բնաշրջում.— Բանի՛ շեշ-
տուեցաւ հացի խնդիրը, առօրեայ պէտ-
քը, այնքան փոխուեցան գաղափարները:
Այդ խնդիրը լուծելու միակ միջոցը գի-
տութիւնն էր: — Փարձով իմացանք թէ
մեր մէջը բանաստեղծը, երաժիշտն ու
արուեստագէտը անօթի կ'մեռնին. բարձր
ու միջին դասակարգերու քով երբեմն
գեղագիտական ճաշակը կ'պակսէր, կամ
չատ քիչ արժարժուած էր: Հիմակ ալ
անտարբերութիւն մը կ'տիրէ անոնց մէջ:

Հակահարուած մը տալ պէտք է. փո-
խանակ թախծոտ գրիչով մեր կեանքին
նուազումը ողբալու, ապրելու ուրիշ ձև
մը կ'ընտրենք: Իւրաքանչիւր ուսանող
գիտնալու է թէ հիւանդ չըջանի մը մէջ
ներշնչումներ կ'ունենայ. արշալոյսի,
վարդի, արևի տարիքն է ատ. սակայն
չուտ կ'անցնի այդ երազը, որու կ'յա-
ջարգէ ցուրտ իրականութիւնը. վայ է
քեզ թէ որ միջակ միտք մ'ունիս. աւելի
աղէկ չըլլար համեօտ արհեստ մը որո-
շես ու անոր մէջ յաջողիս. այս եղանա-
կով թէ՛ արժանիքդ պահած կ'ըլլաս և
թէ գիւրք մը գրաւած: — Դուրեան չկըր-
նար ըլլալ ամէն մարդ. («մանուկ հան-
ճարը» դարու մը երկունք է), բայց կըր-
նայ գիտուն ըլլալ և ընկերութեան սա-
տարել իրովսանն:

Սկզբունք ընենք ուրիշ կարօտ չմտալ.
Բարիքի բանաստեղծը կօշկակար եղաւ
իր հացը ինք իր ձեռքով ճարելու հա-
մար: Ամէն աշխատութիւն պատուաբեր
է մեզ. անով կ'ստեղծենք բնութենէն
մեղի արուած իրերու օգտակարութիւնը:

Լաւ կշռենք մեր յարմարութիւննե-
րը. մտնենք այն առպարէզին մէջ՝ ուր
ճարպիկութիւննիս քիչ շատ ցոյց պիտի
տանք: Այն ատեն ո՛չ արտաքին աշ-
խարհը, ո՛չ եղանակի փոփոխումը պիտի
այլայլեն մեր տաժանօրէն կողմած քիկ
մը երջանկութիւնը: Կեանքը տանջանք
մը պիտի չըլլայ, և ոչ ալ աշխարհք
դժոխք մը:

Ձմրան ապաւորութիւններս ասոնք են. բաւական պաղ պիտի գտնէք, բայց չեմ կրնար կեղծել: Շուրջերնիս նայինք, ու վերջէն «երկինք», կապոյտ անհունին, վառվառ աստղերուն ելն:

ՊԼՈՒՋ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Մանխաղործութեան վրայ գրած մեր նախորդ յօդուածը աւարտելու համար կը գրենք հիմա ալ ներկարարութեան վրայ, որ անոր հետ ծագում առած, ծագած ու զարգացած է, վասն զի այս երկու արհեստներու յաւաքգիմութիւնները իրարու հետ ունիւն կը համեմատին. որքան փայլուն, մաքուր ու շատ պէտքաւորութիւններ ըլլան գոյներու, այնքան շատ կ'ուզուի Մանուսան, Թափիկ վարպետը առանց բնութեան հինգ մայր՝ կամ ծիածանի եօթը՝ գոյներուն վրայ գաղափար ունենալու փորձառութեամբ և պահանջներու բերմամբ հնարած է երկնալուսնի գոյներ, ներկեր, զորս այժմ կը կիրարկէ գոյնզգոյն մանուսաներ պատրաստելու համար:

Փաղփուռն, պոռթկացող գոյնը մոգական ազդեցութիւն ունի թերակիրթ մարդուն վրայ, մանաւանդ այն բաց կարմիրը, որ իրիկուն արեւին պէս կը վառի, շատ յանկուցանող է. ու դժբաղդաւար այս խիստ պիտանի գոյնն է, որ տարիներով յոգնեցուց Արարիկիցին առանց գոհացուցիչ յաջողութիւն մը տալու, մինչդեռ միւս գոյները դիւրութեամբ ներկեց ու ալ դրսէն գունաւոր մանածի պէտք չունի բնաւ, բացի այդ «Ֆրէնկի» կարմիրէն որուն վառվառն, յիկուն ու անալալ բոսորը հետաքրքիր վարպետներու ուղեղը յոգնեցուցած ու կարեւոր գումարներ փճացնել տուած է:

Տարակոյս չի կայ որ Եւրոպացին կը ներկէ կարմիրը ճիշդ նոյն «պիլզարին»ով, զոր հոս ալ կը գործածեն, բայց տեղային ներկը չի յաջողիր. գոյնը աղօտ և մանածը եւրոպականին այն զարմանալի ողորկութիւնը չունենար: Մենք հոս պատմենք ներկելու մեր եղանակը և «Հանրագիտակ» թող հաճի սըր-

բագրել եթէ թիւր ու թերի կողմեր կան, — (բայց մեր արհեստաւորներ կը վախճան թէ իրենք բան մը չի շահելէն զատ չըջակայ մրցակից քաղաքներ օգտուին մեր անգաղտնապահութենէն, վասն զի — ո՛վ ինչ կ'ըսէ թող ըսէ — նախ անձին՝ ապա ընկերին, նախ ընտանիքին ապա Հանուրին, և նախ Ծննդավայրին ապա Երկրին օգուտը խորհելու է, և կը խորհի՝ արդէն, մարդ(*):

Կարմիր ներկելու համար «բամպուխ եաղին» սօտայի լուծուսով կը կտրեն, որ կ'ըլլայ թանջրի պէս կապոյտ կտրուածք մը, ասոր մէջ քանիցս կ'ընկղմեն մանածը ու կը ճմռթիեն, որուն կ'ըսեն «եաղուն քաշել», ու ապա լաթերու մէջ կը պահպանեն 20—30 խամ, որուն կ'ըսեն «կաթուն դնել», այս խնամով գործողութենէն վերջն է որ «պիլզարին»ը եփած սանին մէջ կ'ընկղմեն մանածը և կ'եփեն երկարատեւ. այս եփուածքին մէջ աւելցուած կ'ըլլայ նախապէս քիչ քանակութեամբ աղ. կամ պաղլեղ և կամ թէնէքեար, յետոյ վազուն ջրի առջև կը լւան ընդ երկար:

Սեւը, այն պարկեշտ գոյնը՝ որ այնքան լաւ կը պատշաճի միշտ տխրաւիթ պարագաներու, երկու տեսակ է, խամ ու խաս, այսինքն դիւրալալ, որ շատ շուտ կը թօթուէ, և որուն դէմ ստէպ միջոցներ խորհուած ու գործադրուած են, նոյն իսկ տեղական իշխանութեանց կողմէ «խամ»ի գործածութիւնը արգիլելու համար, և անալալ, անխոփոխ որ գոյնը կը պահէ, չի թօթուեր բնաւ, մինչև որ տարազը հիննայ, ծուիկ ծուիկ ըլլայ. ասոր մէջ նշանաւոր է լեղակի

(*) Գ. Տէվէճեան էֆ.ի ակնարկութիւնը շատ չիտակ է. բայց մեր նպատակը ոչ թէ իրենց գաղտնիքը իրենց ձեռքէն կորզել է, այլ աւելի կատարեալ տեղեկութիւններ հաղորդելով, ըստ կարելոյն իրենց արհեստը կատարելագործութեան հասցնել. և ասիկա ալ տարբեր կերպով չի կրնար ըլլալ. Երկրորդ՝ իրենք իրենց արհեստական գաղտնիքները երեւան հանելէ կը վախճան, զի մի գուցէ ուրիշներ օգտուին, հապա մենք որ իրենց գիտցած դրութիւններուն լաւագոյնները հրապարակ պիտի նետենք, ինչ ըսենք մեր այս զոհողութիւններուն համար:

Ծ. ԽՄԲ.

սեւ, զոր լեզակադործները՝ կը ներկեն մէկ ծրարը 15—20 զրուշի դնով։ — Միւս սեւ կը ներկուի սապէս։

Մէկ փաթէթ մանածի համար՝ 60 տրամ «տնելին» (մոխրագոյն բիւրեղ) և 60 տրամ «զաճ եալը», ասոնք կը լեցնեն 6 քաշ ջրի մէջ ու վրան կ'աւելցնեն 90 տրամ կարմիր փոթաս, զոր առաջուց եռացեալ ջրի մէջ լուծած կ'ըլլան։ Կ'ընկղմեն մանածը և քանի մը անգամ ճմռթքելէն վերջ կը թողուն այդտեղ 12—24 ժամ, ապա ցամքեցնելէ վերջ լաւ մը կը լուան հոսուն առատ ջրի մէջ։

Դեղին ներկի համար (մէկ ծրարին) 70 տրամ «զուրչուն տուզի» և 70 տրամ փոշիացած «միւրտէսէնկ» լաւ մը կ'նոսնէ քիչ մը ջրի մը մէջ։ ապա կը դնեն որ չաքի—գիրտը յատակը նստի—այս լուծուածքին մէջ մաս առ մաս և ինամով կը թաթխեն մանածը քանիցս և մէկ քանի ժամ «կաթուն» դնելէն վերջ կրաջութէն կ'անցընեն ու անմիջապէս աղբիւրին առջև կը տանին լուանալու։ Յետոյ կը ներկեն 70 տրամ կարմիր փոթասի և 100 տրամ պաղլեղի լուծաջրի մէջ և ամբողջօր մը լաթերու մէջ պահելէն ետքը կը տանին կը լուան մաքուր մը, վասն զի վրան եթէ դեռ աւելորդ մասեր մնան, արեւին դէմ սրուելու ատեն այրի մանածը։

«Տարչինի» ներկելու համար՝ դեղին ներկուած մանածը լուացուելէ վերջ փոխանակ չորցնելու՝ 80 տրամ քէթիր—հինտիով եփուած լուծաջրի մէջ ներկելու է։ —Իսկ «ճէվիզի» (ընկուզագոյն) ներկելու համար վերը յիշուած կերպէն ետքը՝ 50 տրամ գիտորի լուծաջրէն և ապա 50 տրամ «զաճը գըսրըզը» լուծաջրէն կը քաշեն։

Այս գրուած գոյներու զանազանութիւնները եթէ հաշուենք՝ աւելի բաց կամ աւելի մութ կրնանք 50է աւելի գոյներ ունենալ, այսինքն նոյն գոյներու զանազանութիւնը։

Կայ նաև «Ֆընտըգի», զոր լեզակի խիստ թեթեւ կապոյտ ներկուածի մը վրայ դեղին ներկելու եղանակը կը գործածեն նոյն դեղերով, միայն մէկմէկ քիչ քանակութիւնները աւելցուած։

«Կանանչ», զոր դարձեալ լեզակի կապոյտ գոյնին վրայ կը ներկեն, այնպէս՝ ինչպէս ճերմակ մանածը դեղին կը ներկէին, միայն թէ այս անգամ դեղերու քանակութիւնը կէս առ կէս կը պակսեցնեն։

«Զէյթունին», այս ալ լեզակի բաւական կուզդ կապուտի վրայ, «ճէվիզի» պէս։

«Սահլէի» ներկելու համար 100 տրամ զուրչուն—թուզի, 100 տրամ միւրտէսէնկ զատ ամանի մը մէջ կ'եփեն և 100 տրամ կարմիր փոթաս ուրիշ ամանի մը մէջ, ու սալա քաշելու է մանածը այս խառնուրդէն։ Ետոյ՝ 180 տրամ քէթիր—հինտի լուծուածքով ներկուած մանածը կրկին ներկելու է։

«Թուրունճի» (նարնջագոյն), նախ 100 տրամ զուրչուն—թուզի և 200 տրամ միւրտէսէնկ լուծաջրին մէջ կը քաշեն մանածը, ու ապա 100 տրամ կարմիր—փոթասի լուծաջրով կը քաշեն և յետոյ անմիջապէս եռացած կրաջութի մէջ կը քաշեն, ուր բաւական ատեն կը թողուն փայտի ծայրով մը անդադար խառնելով։ այս ամբողջ գործողութիւնը երկու անգամ կրկնելէ վերջ 1—2 տրամ կարմիր—անելինի (ուռժ կամ պրուշ՝ չեմ գիտեր ո՞րն է շիտակ անունը) որ ջրով եռացուցած կ'ըլլան՝ կը ներկեն։

Ներկարարութեան մաս կը համարուի նաև մանածին սպիտակացումը, որուն կ'ըսուի ղայսերցնել։ ասիկա առաջ նախնական ձեւերով կը կատարուէր, այսինքն օրերով թակնել մանածը։ կրաջրի մէջ պահել ընդերկար և յաճախակի արեգակին դէմ սփռել, բայց հիմա քլորիւր—տը—ջօ և այլն դեղերով կ'ընեն, որ բաւական կը յաջողի, միայն թէ եւրոպականին նման ո'չ այնչափ ճերմակ և ո'չ ալ այն խուսափող կապուտակութիւնը կ'ունենայ՝ որ այնքան ակնահաճոյ ճերմակութիւն մը կ'արտաբայէ։ Ճերմկուած մանածն ալ շատ կը գործածուի տեղւոյս մանրագործութեան մէջ, մոնաւանդ ամրան եղանակին հազուատներուն համար։

Զի մոռնանք ըսել թէ ներկի ամէն գործողութենէ առաջ մանածը լաւ մը թրջուած ըլլալու է, որուն համար կը տանին մանածը առուակի մը եզերք և երկար ատեն կը թակնեն—յոգնեցուցիչ գործողութիւն մը—(չի կայ արդեօք մասնաւոր դեղ մը որու շնորհիւ ջրի մէջ ընկղմած մանածը չուտ մը թրջի խիստ)։ Մանածը ներկելէ առաջ ծեծքել այնքան կարեւոր է, որքան անհրաժեշտ է հինեղէ առաջ թանաղ գայն(թանաղը՝ ըսած ենք մեր նախորդ յօդուածով)։ Այլուրէ եփուած խիստով մը շոյ տայ մանածին՝ դիմացկուն ընելու համար)։

Արաբկիր

Գ. ՅԵՎԷՃԵԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԴՈՐՄՆԱԿԱՆ

Է.

(Շարունակ. ԳԻՏ ԲԷ-34)

Այս ուսումը ուրեմն շատ օգտակար է ո՛չ միայն երկրագործին, այլ ամէն մարդու, ըլլայ արհեստաւոր կամ վաճառական, գործաւոր կամ ճարտարագէտ: Ակնարկ մը նետենք ուրեմն այժմ երկրագործական տեսակէտով օգտակար եղող գլխաւոր մէտէորարանական երեւոյթներու վրայ:

Եթէ ուէ պատճառով մը երկիրս չըջապատող միջնորտը ջնջուէր, ուղղակի արեւուն ճառագայթները ընդունող երկիրս մասերը այնքան պիտի տաքնային որ կարելի պիտի չըլլար ապրիլ. ու քիչ ժամանակուան մէջ բոլոր կենդանիները ու բոյսերը պիտի կորսուէին և շուքին տակ գտնուող վայրերը նոյնիսկ ցերեկին սառուցիչ ցուրտի մը պիտի ենթարկուէին. գիշերն ալ այժմու բեւեռներուն վրայ իշխող ցուրտէն աւելի պաղութիւն մը պիտի զգայինք, այնպէս որ դարձեալ ո՛չ բոյս և ո՛չ ալ կենդանի կարող պիտի ըլլար տոկալ ու ապրիլ: Օգը ուրեմն մէկ կողմէն երկիրս տաքութեան կորուստը (ճառագայթացումով) կը սահմանէ, միւս կողմէն ինքն ալ տաքնալով իր մէջ գտնուած մարմիններն ալ քիչ ու շատ կը տաքնան:

Երկնի կապոյտ գոյնը, արշալուսի և վերջալուսի ժամանակ երկնքի կարմիր, ճերմակ, դեղին և ոսկեգոյն գոյները յառաջ կուգան օդէն և իւր մէջ գտնուած ջուրի շոգիէն:

Նոյնպէս առանց օդի ձայն մը չպիտի լըսէինք, որով մեր կեանքը բոյսի մը կեանքէն չպիտի տարբերեր:

Փորձեր հաստատած են թէ որչափ երկրի մակերեսէն բարձրանալով հեռանանք, այնչափ օդը կ'անօսրանայ և միեւնոյն համեմատութեամբ տաքութիւնն ալ կը նուազի. բնագէտները այսչափով չգոհացան, երկար հաշիւներէ ու փորձերէ միայն տա եզրակացութեան հասած են թէ 11,000 մետր բարձրութեան մէջ մարդ կրնայ ապրիլ եթէ իւր հետ ունի խտացեալ օդ կամ թթուածին և վերջապէս գրեթէ 74 քիլոմետրէն վեր օդը բոլորովին կ'ապառի. բայց յետոյ կը գտնուի

օդէն շատ աւելի թեթեւ նիւթ մը, զոր կը կոչեն «եթէր»:

Միմիայն երկրի մակերեսէն վրայ չէ որ օդը կը գտնուի. պէտք է գիտնալ թէ օդը ծանրութիւն մ'ունի և այս ծանրութեան շնորհիւ հողին և ժայռերու բոլոր ճեղքուածներէ հողին մէջ կը մտնէ, ուր բուսականութեան համար շատ կարեւոր դեր մը կը խաղայ, ո՛չ միայն արմատներու հաղորդ գտնուելով սնունդ շնչառութիւնը կ'ապահովէ, այլ հանքային նիւթերուն վրայ ազդելով կամաց կամաց զանոնք քատակելի միջակի մէջ կը դնէ:

Հոս կը տեսնանք թէ օդը որքան օգտակար է կենդանիներու և բոյսերու կեանքը պահելու համար:

Երկրագործական օգերեւութաբանութեան նպատակն է բոյսերու աճման վրայ ազդող օգերեւոյթներու ուսումը. բայց նախ տեսնենք թէ ի՞նչ է կլիման և իւր ազդեցութիւնը բոյսերու վրայ:

ԿԼԻՄԱՅ

Երկրագործութեան մէջ կլիման մեծ դեր կը խաղայ և երբ մարդ մը կը փախաքի հողագործութիւն ընել ուէ երկրի մը մէջ, պէտք է որ նախ լաւ ուսումնասիրէ և ճանչնայ կլիման, որովհետեւ բոյսերու աճումը միայն հողէն և իւր քիմիական բաղադրութենէն կախում չունի. նա կախում ունի նաեւ հողին աշխարհագրական դիրքէն, իւր բարձրութենէն, պատասխանքներէն (abris), անձրեւի շառուիթենէն կամ նուազութենէն, ջերմութեան աստիճանէն, ձմրան ցուրտին տեւողութենէն ևն, մէկ խօսքով կլիմայէն:

«Կլիման» ուրեմն երկրի մը մէտէորաբանական երեւոյթներու ամբողջութիւնն է. օրինակի համար երբ կ'ըսենք թէ Ափրիկէի հիւսիսային կողմի երկիրները «տաք կլիմայ» մ'ունին, մէկէն կը հասկնանք թէ այդ երկիրներուն մէջ մէտէորաբանական երեւոյթները կը համապատասխանեն շարունակելի տաքութեան, նոյնպէս երբ կ'ըսենք թէ Ռուսիոյ հիւսիսային մասը «ցուրտ կլիմայ» մ'ունի, կը հասկնանք թէ հոն մէտէորաբանական երեւոյթները կը համապատասխանեն շարունակելի ցրտութեան:

Երբ տեղ մը կը կարդանք թէ Անգլիա «խոնաւ կլիմայ» մ'ունի, պէտք է իմանանք թէ Անգլիոյ մէջ գրեթէ միշտ երկինքը ամ-

սլոտ է և միգամած յաճախ և առատորէն անձրեւ կը տեղայ և այլն :

Ընդհանրապէս ծովեզերեայ երկիրները խոնաւ կլիմայ մ'ունին, որչափ որ ծովու մը կամ լճի մը մօտենանք, այնչափ խոնաւութիւնը կը շատնայ և փոխադարձաբար որչափ որ ծովէն կամ լիճէն հեռանանք, այնչափ անձրեւներու թիւը կը նուազի, երաշտութիւնը հոն կը տիրէ. ամառը շատ տաք կ'ընէ, իսկ ձմեռը՝ շատ ցուրտ. կլիման ենթակայ է վարկենական փոփոխութեան, օրինակի համար Նանսիի (Ֆրանսա) կլիման այս պարագային մէջ կը գտնուի. շատ անգամ կը պատահի որ լուաւօտուն ցուրտ կ'ընէ, ցերեկին սարսափելի տաք, քիչ յետոյ երկինքն ամպերով կը ծածկուի, կ'անձրեւէ, օդը կը զովանայ, բայց ահա՛ արեւը դարձեալ հորիզոնին վրայ կը նշմարուի ու օդը կը տաքնայ :

Գալով ծովեզերեայ կլիմային, հոն ցերեկուան և գիշերուան տաքութեան աստիճաններու տարբերութիւնը հազիւ հազ գգաւի է, որովհետեւ ցերեկուան տաքութեան մէկ մասը ծովուն կամ լճին պարունակած մեծաքանակ ջուրը տաքցնելու կը ծառայէ և ջուրը որ ամենէն դժուար տաքցող մարմինն է, փոխադարձաբար ամենէն ուշ կը պայփ որով արեւ չեղած ժամանակ (ամառու օրերը կամ գիշերները) ջուրին յարակից գտնուող մարմինները միշտ անոր տաքութենէն քիչ ու շատ պիտի օգտուին, այնպէս որ ծովու մը կամ քիչ ու շատ ընդարձակ լճի մը ջուրը օրուան տաքութեան «ուղղիչ» (règulateur) մը կրնայ համարուիլ :

Սիւրբի
(Շրմա-Կիւ)

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ

ԵՐՇԻԿ ՇԻՆԵԼՈՒ ԱՐԶԵՍԸ

ՀԱՐՑՈՒՄ ԹԻԻ 57 ԵՒ 58

Սամաթիայէն Յ. Արաւնեան էֆ. հետեալ հարցումները ուղղած է մեզ.

Ա.—Թէ ինչպէս պատրաստելու է աղէկ տեսակ երչիկներ (սուճուք).—Թէ ինչ միջոց գործածելու է որ լաքէստան համով ըլլայ, և երկար առեն գիմանայ :

ՊԱՏԱՍԽԱՆ.—Մենք եղէնները երկար ա-

տեն պահելու ճարտարարուեստական ճիւղին մէկ մասը կը կազմեն այս հարցումները, և մենք՝ շարունակութեան մէջ պիտի խօսէինք արդէն ասոնց վրայ ալ, բայց տեսնելով որ հիմա ժամանակն է արդէն, և Արաւնեան էֆ. ալ իւր հարցումով կը կանխէ մեզ, յարմար դատեցինք այժմէն երչիկի պատրաստութեան մէկ քանի ընտիր եղանակներուն վրայ գրել, որոցմէ՛ կը յուսանք, շատեր կըրնան օգտուիլ :

Պղսայ և գաւառներուն մէջ, ինչպէս գիտենք, տեղական հնաւանդ դրութիւնով երչիկ կը պատրաստեն, որոց ամենէն ընտրելագոյններն անգամ, առանց իւղի չոր և ածուխի պէս սև, կամ փտած տեսքով, և համեմեմներու անհամեմատ չափազանցութիւնով իրիտ դժուարամարս սնունդ մը կը կազմեն : Մինչդեռ անդին՝ Եւրոպական տեսակները իրենց համով և հոտով, պատրաստութեան ընտիր եղանակներով, և վարդաթոյր կենդանի գոյնով, արհեստին մէջ յաջողակութեան և գերազանցութեան պէս բան մը կը ցուցնեն : Մենք կը տեսնենք զանոնք հիացումով, և կ'ուտենք արորժակով, բայց երբեք մտքերնուս չենք անցըներ գէթ մեր տուններուն մէջ պատրաստութեանը անոնց նմանցնել, տեղական դրութեան մէջ ինչ ինչ փոփոխութիւններ ներմուծելով, Եթէ հրապարակի վրայ երչիկ չիմող և ծախողներ հետեւին անոնց դրութեան, տարակոյս չի կայ որ ժողովուրդի մեծ մասէն իրենց ապրանքը պիտի գնահատուի, և այս կերպով շահու նոր աղբիւր մը յառաջ բերած պիտի ըլլան : Նոյն իսկ գաւառացի երկրագործներ կամ կենդանաբոյծներ փոխանակ կով և ոչխար ուղղակի Պոլիս զրկելու, եթէ վանոնք տեղւոյն վրայ ապուխտի (պաստըրմա) զտապուխտի (ժամպոն) կամ երչիկի վերածեն և այնպէս արտածեն, իրենց չահը կրկնապատկած կ'ըլլան : Արդէն սա ճշմարտութիւն մ'է որ, ոգևոր կենդանին ճամբորդութեան մէջ կրնայ շատ վտանգներու ենթարկուիլ, մինչդեռ պահածոները այդ անպատեհութիւններէն զերծ են : Կեսարացիք՝ որ նշանաւոր տեղ մը կը բռնեն ապիտագործութեան և երչիկի պատրաստութեան արհեստին մէջ, դժբաղդաբար ցարդ իրենց հնաւանդ դրութիւնները անխախտ կը պահեն, և իրենց ապուխտի և երչիկի վրայ ու է մի փոփոխութիւն չի տես-

ներկր . մանաւանդ իրենց երչիկը այն ատի-
ճան չափազանցօրէն համեմուած է , որուն
մէկ պատառը բերանդ կը բռնկցնէ , կ'այրէ :
Աղէկ ապրանքներ , միշտ և ամէն տեղ յարգի
են , և ըստ այնմ կը վճարուին :

Եւրոպական պատրաստութիւնները երբ
մենք կը գովենք , հարկաւ ուրիշներ ալ պիտի
առարկեն՝ թէ անոնք իրենց մէջ խոզի միս
և ճարպ կը պարունակեն . արդէն տեղացի
ժողովրդեան մեծ մասը սովորութիւն չունի
այդ կենդանիին միտը ուտելու , և շատեր չեն
ախորժիր խոկ անկէ : Ասիկա մասամբ իրա-
ւացի է , բայց անցեալները Հանրագիտակի
մէջ , այդ ճարպին տեղ գործածելու համար
յանձնարարուած էր Կիլիկեան (գարաման)
ոչխարի դմակը ուրիշ աւթիւ . և ահա հոս
աւելի օգտակարապէս կրնան գործածել զայն ,
որով և իրենց պատրաստութիւններն ալ կը
հաստատին եւրոպականներուն(*) :

Շփոթութեանց տեղի չի տալու համար ,
հետզհետէ բացատրենք եւրոպական երչիկ-
ներուն մէկ քանի տեսակները այժմ , իրենց
անուններով և պատրաստութեան եղանակ-
ներով մէկտեղ : Միայն թէ խոզի միսն և
ճարպին տեղ պիտի դնենք գարաման ոչխա-
րի միս և դմակ , ինչպէս և կովու միս . ու-
զովը կրնայ հաւատարապէս մին կամ միւսը
գործածել : Անցողակի՝ չի մոռնա՞նք սակայն
ըսելու թէ , խոզի միտը իւր մէջ կարգ մը
վտանգաւոր հիւանդութեանց (գուլիին , լատ-
ւըրի) սերմերը կը պարունակէ , որու հում
գործածութիւնով այդ սերմերը մարդուս յո-
րինուածքին մէջ ներմուծուելով , յառաջ կը
բերեն շատ անգամներ տհաճի վտանգներ ,
մինչդեռ ոչխարի և եզի միտը վերայիշեալ ան-
պատեհութիւնները չունին :

Երչիկները աղէկ ըլլալու համար , գըլ-
խտորապէս պէտք է ջիղերը և ճարպերը
(իշ հաղը) ուշադրութեամբ դատել և միայն
միտը առնել , Յայտնի է որ ջիղերը թէ՛ ան-
ծամելի և թէ՛ անմարսելի են . խոկ ճար-
պը՝ դժուարամարս ըլլալով հանդերձ , բերնի
մէջ փակչելով , անախորժ յետամնաց համ մը
կը թողու :

Լիօնի ԵՐՇԻԿ (Saucisson de Lyon)

Լիօնի երչիկը օգտակար պահածոյ մ'է ,

(*) Անձնական փորձառութեան վրայ հիմ-
նուած կը զուրցենք :

երկար տտեն անվթար դիմանալուն համար :

Ահաւասիկ իր պատրաստութեան եղանակը :

Առէք գարաման ոչխարի ազդր (պուտ)
մը , ոսկորները հանեցէք , ջիղերը (սինիր) և
ճարպերը ամբողջովին պատեցէք և մնացած
միտը ծեծեցէք այնչափ՝ մինչև որ կատարեալ
խիւսի (մաճուն) մը վերածուի . այն ատեն
100 տրամի չափ դմակ ջարդեցէք մանր քա-
ռակուծիներու ձեով՝ 1 քաշ միսի համար , և
խառնեցէք ամէնքը իրար , աւելցուցէք նաև
հետագայ համեմանքը (պահար) :

Կարմիր դաղըեղ (պիպէր) կծու	7 տրամ
Սև պղպեղի փաշի	21 »
Բորակ (կէօհէրչէլէ)	4 »
Աղ սովորական	85 »
Սեւ պղպեղի հատեր	7 »

Այս չափերը 10 քաշ միսի համար են զոր
պէտք է յարմարցնել ձեր ունեցած մսի քա-
նակութեան : Երբ ամէնը աղէկ մը իրար խառ-
նէք և շաղուէք , այն ատեն թողուցէք 5—6
ժամ հանդարտի , յետոյ սառնուց աղջուրը
դրուած խոշոր աղիքներու (կէօտէն) մէջ խը-
նամով լեցուցէք , այնպէս որ երբեք պարապ
տեղ չի մնայ , բերանը ամուր մը կապեցէք ,
և վերէն վար իր կտրութեանը առասանով
(գըննապ) փաթթեցէք : Չոր և չուք տեղ մը
կախեցէք . 2 ամիսէն վերջը կրնաք գործա-
ծել : Եթէ վերայիշեալ խառնուրդին մէջ քիչ
մ'ալ ծեծած սխտոր խառնուի , 1 քաշ միսի
1 տրամի հաշուով , աւելի համով կ'ըլլայ : Ո-
մանք սխտորի հոտէն չեն ախորժիր , իրենց
համար միջոյ մը կը ցուցնենք՝ որով , թէ սըխ-
տորին հոտը չեն առներ և թէ երչիկը սըխ-
տորով համեմուած կ'ըլլայ : Ահաւասիկ .

Սխտորը առանց սոկելու , միմիայն գըլ-
խու կողմը գտնուած մարուքի պէս արմատ-
ները կտրեցէք նետեցէք , և սխտորը մեջտե-
ղէն երկուքի բաժնեցէք , դրէք սանդիւն (հա-
վան) մէջ և ծեծեցէք , մինչև որ խիւսի մը
վերածուի , այն ատեն սանդէն՝ հանելով ,
դրէք սկահակի (քեառէ) մը մէջ , և վրան լե-
ցուցէք մրգօղի , գօնեաք կամ ալըղ , ինչ որ
ունիք ի պատրաստի . եթէ գուտ ալըղ լե-
ցնէք , պէտք է կէս առ կէս ջուր խառնել ,
յետոյ դգալով մը յարեցէք լաւ մը , և յետոյ
ամէնը մէկէն լաթի մը մէջ լեցնելով , ուժով
սեղմեցէք , մինչև որ աղէկ մը մզուի (սիւզ-
միշ ընել) : Իյն ատեն լաթին մէջ մնացած

սխտորի դիրտը կը նետէք, և վազած հեղուկը առնելով կը խառնէք ծեծուած միսին: Երեծուած միսը աղիքներուն մէջ լեցուցած ատեննիդ, ինչպէս սովորութիւն է մերթ ընդ մերթ ձեռքերնիդ ջուրը թաթխել, եթէ այդ սխտորախառն ալքոլէն շատկէկ պատրաստելով ջուրին հետ կէս առ կէս խառնէք, և այս խառնուրդին մէջ ձեռքերնիդ թաթխէք, աւելի աղէկ կ'ըլլայ, որովհետեւ ալքոլը արդէն հականերիդ մ'ըլլալով, երչիկը լաւ կը պահէ: Ոչխարի մսին տեղ կրնաք անշուշտ կովու միս գործածել, պայմանաւ որ մէջի գտնուած ջիւղերը և ճարպերը ամբողջովին զատէք. կովու ճարպը երչիկին աղէկ համ չի տար:

Մ Ո Ռ Թ Ա Տ Է Լ

Ասիկա խալական երչիկ մ'է, զոր կը պատրաստեն փամփուռներու մեջ հետեւեալ կերպով:

Առէք խոզի ազդր մը, (կամ ինչպէս ըսինք, ասոր տեղը կրնաք գործածել կովու կամ գարաման ոչխարի միս) ոսկորները, ջիւղերը, և ամբողջ ճարպերը զատեցէք. և մէկ ու կէս քաշ միսի համար 100 տրամ խոզի մորթածարպ (կամ ոչխարի դմակ) խառնելով, նախ թեթեւ մը մանրեցէք մսի տախտակի վրայ, յետոյ դրէք մեծիկ անկանի (տիւպէկ) մը մէջ, և խոշորկէկ թակով (թօգմաք) մը ծեծեցէք, հարիսա (քէչկէկ) ծեծելու պէս, մինչև որ ամբողջովին խիւսի վերածուի, առանց իսկ փոքրիկ կտոր մը մնալու: Երբ այս վիճակին հասնի, այն ատեն խառնեցէք յետագայ համամանքը:

Երեծած աղ, այսինքն՝ խոշոր աղ,

զոր ծեծելով մանրելու է	40 տրամ
Բորակ	3 »
Սեւ պղպեղի հատեր	4 »
» » փոշի	10 »

Սխտոր՝ նախորդին պէս եթէ ուզէք:

Յետոյ կրկին 50 տրամ խոզի ճարպ կամ ոչխարի դմակ մանր քառակուսիներու ձևով ջարդելով, ամէնը իրարու հետ լաւ մը խառնեցէք, և լեցուցէք փամփուռներու մէջ, (նախապէս աղ ջուրի մէջ դրուած ըլլալու է): Ատոնց բերանը առասանով կապեցէք, և զօրաւոր աղջուրի (սալամուրա) մէջ պառկեցուցէք. 8—10 օր վերջը հանեցէք, կախեցէք

տեղ մը, որ ինքնին կաթկթէ. քիչ մը չորնալէն վերջը՝ ծխոտելու է 10 օրի չափ, ուրկէ վերջը զով և չոր տեղ մը պահելու է:

Մօռթատէլը երչիկի պէս հում ալ կ'ուտուի, բայց եւրոպացիք սովորութիւն ունին ընդհանրապէս երեկով ուտելու, որ հետեւեալ կերպով կ'ընեն.

Մօռթատէլը երեկու ատեն անձեռոցի մը մէջ փաթթելով, առասանով կը կապեն, որպէս զի՝ եփած ժամանակ ճաթուտելով մէջի միսը դուրս չ'ընայ. յետոյ կը դնեն աղջուրի մէջ, և կը խաշեն: Եթէ մօռթատէլը մէկ քաշ կը կշռէ մէկ ժամ. և որչափ աւելի կշռէ, երեկու ժամանակամիջոցն ալ այնչափ երկուրելու է: Ջուրին մէջ կը խառնեն նախապէս ուրց (քէքիկ), դափնիի տերեւ (թէֆնէ), եղեսպակ (ատա չայը), և եթէ ուզէք ասոնց մօտ ուրիշ անուշահոտ բոյսեր: Պաղելէն վերջը կ'ուտեն մօռթատէլը:

ԾԽՈՏԱՆԵ ԵՐՇԻԿ (Սօսիս ֆիւմէ)

Մէկտեղ ծեծեցէք 3 քաշ խոզի ճարպ կամ ոչխարի դմակ և 2 քաշ խոզի, կովի կամ ոչխարի միս, երբ աղէկ մը մանրուի, խառնեցէք հետագայ համեմունքը:

Դափնիի (թէֆնէ) հունտ ծեծած	կէս տրամ
Փոշի պղպեղ, սև	4 »
Բորակ	1 »
Աղ	20 »
Ուրց (քէքիկ)	1 »

Սխտոր՝ եթէ կ'ուզէք:

Լաւ մը թրեցէք, թողէք հանգարտի 12 ժամու չափ, յետոյ լեցուցէք աղիքներուն մէջ, կապեցէք բերանները, և սկսեցէք ծխոտել, մինչև որ աղուոր դեղին գոյն մ'առնեն:

ՍԹՈՒԱԶՊՈՒՐԿԻ ԾԽՈՏԱՆԵ ԵՐՇԻԿ

Առէք երկու քաշ միս, ջիւղերը և ճարպերը զատեցէք, և 1 քաշ դմակի հետ ծեծեցէք խոշորկէկ. և խառնեցէք

Փոշիացած մէկընկոյզ (հինտսթ. ճէփիկի)	4 տրամ
Սև պղպեղ փոշի	4 »
Բորակ	4 »
Աղ	15 »

Սխտոր՝ եթէ կ'ուզէք:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԳԵՇ ՍՍՍՄՈՐՍ ՄՐ

Արեան այլալուծեան ամենէն արտառայ հետեանքներէն մին է, պիտի հաւատա՞ք, ստամբսի հիւանդութիւնը. կեցէ՛ք, հասկցնեմ: Արեան այլալուծիւն ըսելով, կ'ուզեմ բացատրել իր բնական մաշումը, ձգտումը՝ զոր ունի մեր անդարար հեղուկը գրաւելու ակտա՞ծին ժահրերու կոյտ մը, կենալով գիպուածաբար հոս ու հոն մեր մարմինին մէջ՝ զանոնք փոխադրելու ու ամբողջ յօրինուածքին հետ խառնելու համար:

Մեր ողորմելի անձին բնական և յամր այս թունաւորումին առաջը առնելու համար գարնան և աշնան սկիզբը «մաքրուելու» խորհուրդը շատ ու շատ անգամներ տուած եմ բացարձակ կերպով, ինչպէս մեծ քաղաք մը կը մաքրէ իր երակները, այսինքն իր կոյուղիները իրենց պարունակած ապաւառներէն: Սիրելի՛ ընթերցողներս, կ'երևի թէ ձեզմէ շատեր չեն ուզեր մաքրուիլ, որովհետեւ բազում նամակներ կ'ընդունիմ որ կաշաչեն ինծի ստամբսի հիւանդութեան վրայ բան մը գրել:

Այո՛, սովորական ստամբսային ցաւերու մեծ մասը, մարսողական գործարանի հասարակ շատ մը անհանգստութիւնները պարզապէս արիւնային զանգուածի այլալուծեանէն առաջ կուգան: Ո՛ր և է ժահրով մը պղծուած, անծանօթ թոյնով մը աղտոտած արիւնը պէտք ունի մաքրուելու, մզուելու, մաղուելու, և եթէ այս գործողութիւնը ժամանակին չկատարուի, ստամբսը զայն կը պահանջէ, որովհետեւ դժուարամարսութիւնը շուտով երևան կուգայ և իր բովանդակ պայծառութեամբ կը յայտնուի:

«Դժուարամարսութիւնը» մասնաւոր դժուարութիւն մըն է, խանգարում մը

մարսողութեան մէջ, կամ լաւ ևս՝ աւելի մեր աչքին առջև, ստամբսի և աղիքի պաշտօնական գործողութեան մէկ ապականութիւնն է. իր ամենէն հասարակ յատկանիշերն են անհանգստութիւնը, ստամբսին մէջ ծանրութեան մը զգացողութիւնը, ճաշէն վերջ այս մասին ուռնալը, յօրանջներ, ետ բերելներ և արտաբուրումներ: Շատ անգամ ալ կ'իմանանք փորի կարկաշանքներ, որովայնապնդութիւն որ կը փոխուի փորհարութեան, չափազանց կը լորձոնքատի բերաննիս, գլխի ցաւեր կը զգանք, գլխու պտոյտներ, սրտի բարախումներ և անքնութիւն: Ումանք մեծ տկարութեան մը ենթակայ կ'ըլլան. կը զգան անոր չորթը, սե հարբուխներ կ'ունենան, երբեմն տրտմութիւնը սեւամաղձութեան կը փոխուի. այս ակտանիշներուն կը կցուին հետագաները, որ կ'ընտրուեն հիւանդութեան այլևայլ ձեւերը:

1. Ամարսողութիւնը, զոր հմուտ դասախօսն Շոմէլ, յանիրաւի նկատեց իբրեւ դժուարամարսութեան մէկ ուրիշ ձեւ, անտարակոյս անոր համար որ իրեն հետեանքներէն մին է:

2. Թթու դժուարամարսութիւնը, որ կը մեղմանայ զգայութիւններով, ստամբսին բղխող հեղուկի մը կծու փսխումներով, և որուն «սղուիրդիք» (կծող ?) զգացողութիւնը կ'այրէ կը աւելորէ որկորի խորը: Հիւանդներուն թուրը թուռնըսօլի թուղթին վրայ փորձուելով, քաջածանօթ թթու հակազդեցութիւնը ցոյց կուտայ:

3. Տանջալից դժուարամարսութիւնը, որուն մէջ ստամբսի ցաւերը ունին կծկման ցաւերու հանգամանքը: Մակորովայնի շուրջ կը սփռուին անոնք, մինչև մեր կռնակը տարածուելով. վերը նշանակած որկորի այրումի նոյն զգացողութիւնը կը յայտնուի, բայց առանց փսխումներու և ետ բերելներու: Դարձեալ այլանդակ ու ապականուած ճաշակներ գեղեցիկ սահման մը կուտան, այր կամ

մանաւանդ կին հիւանդները, որովհետեւ կիները, գործաւորութիւնները, միշտ այս հիւանդութեան հակամէտ են. այլեւս կուզեն ուտել մի միայն բոլոր, անմարս կանկաւ, աղցան կամ շաքարեղէններ, թացանները (սալցա) անոնց բերնին ջուրերը կը վազցնեն, անոյշները յայտ ուրախութիւն կը պատճառեն իրենց: Շիտակը ամէն ինչ որ իրենց առողջութեանը փաստակար է, զիրենք կը հրապուրէ, և շատ գծուար է զանոնք համոզել որ պատշաճօրէն սնանին: Հիւանդները՝ ուտելուն պէս՝ կը հանդարտին ստամոքսի ցաւերէն, բայց դեռ ժամ մը չանցած աւելի ստատիկ ու անհանգուրժելի կերպով նորէն կը բռնուին անոնցմէ:

4. Փքաբեր գծուարամարութիւնը, որ կորոշուի ստամոքսի ուռեցքին, հասած կամ անհաս վիրաբուրումներու, փորի կարկաջանքներու ելն. առաւելակշռութեամբ: Հիւանդը քանի մը գգալ ապուր խմելէն կամ իր սառցին պնակը լնցնելէ վերջ, կ'ստիպուի քակել իր բաճկոնին կոճակները, և կ'երեւակայէ թէ ստամոքսին մէջ կայ ծովը իր ձուկերովը:

5. Բորբոքու կամ ապափիթական գծուարամարութիւնը, որ կը կեդրոնանայ աղիքին մէջ, հաճոյք կը զգայ պարբերական փորհարութենէն՝ որ կը փոխուի որովայնապընդութեան: Փորին և ստամոքսին մէջ չըջող ցաւեր (եէլ) կը յայտնուին, տենդը ճաշելէ ետք երեւան կու գայ, և փակոյցները (պալլամ) մեծ քանակութեամբ կազմուելով, կը տեսնուին մինչև իսկ կղկղանքներուն մէջ:

Իւ ելլալ ըսել թէ այս սիրուն վիճակը հիւանդներուն անփութութենէն առաջ եկած է, տարրական նախազգուշութիւն մը չընելու համար իրենց պինդ-դլութութենէն, ինչպէս ձմրան սկիզբը, զանց պիտի չընէիք ձեր բոխերիկը մաքրել տալ, այնպէս ալ ժամանակը եկած ատեն երբ չէք նեղուիր, կը ձգէք միշտ

միւս օրուան՝ ձեր գործարանակազմութիւնը եղած վիճակին մէջ պահելու համար: Ուստի, ինչպէս վերը ըսի, նոյնպէս հոս ալ կը կրկնեմ և խորհուրդ կուտամ ամէն անոնց, որոնք ընդհանրապէս ստամոքսի հիւանդութիւններէ կը տառապին, գարնան և աշնան սկիզբը մաքրողականներ տոնելու են, մաքրողականներ՝ որոնք աւելի բուռեղէններէ բազադրուած ըլլալու են, քան քիմիական բազադրութիւններ:

Թարգ. Զրանսերէնէ

ՄԻՀՐ

Տաճնըչորս տարեկան դեռատի պատանի մ'է ՄԻՀՐ, որ կ'աշխատակցի Հանրագիտակի. իր եռանդալիք և վառվռուն աչքերովը և բնութենէն օժտուած ձիրքերովը, ընկերական կեանքին մէջ դիրք մը գրաւելու մասնաւոր յատկանիշը կը կրէ այժմէն իւր ճակատին վրայ. ուսումնասէր և աշխատասէր ուսանող մը, — որ իւր հայրը կորսնցնելու դժբաղդութիւնը ունեցած է, — իր ընտանեաց և պարագաներուն պարծանքը և սիրտինքը ըլլալ կը խոտտանայ: Կը շնորհաւորենք զինքը իւր յաջողութեան մասին, և ի մասնաւորի վերոյիշեալ Թարգմանութեան համար, որ այնչափ յաջողութեամբ մէջէն դուրս ելած է այսպիսի գիտական յօդուածի մը:

Շ Ե Ր Ա Մ Ա Բ Ո Ւ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

ԲԱՍԴԵՕՌԵԱՆ ԴՊԻԹԻԻՆՈՎ

ՄԱԿԱԲՈՒԾԱՅԻՆ ՓՈԽԱՆՑԻԿ ՀԻԻԱՆԴՈՒԹԻԻՆՆԵՐ

Պղպեղախա (Pébrine Գարս.թ-դ-ն)

(Դարձ-խ-թ. ԿԻ ԲԻ-33)

ՄԱՐՄԵԿԻՆԵՐՈՒ ՄԱՆՐԱԴԻՏԱՑԻՆ ՈՒ ՍՈՒՄԱՍԻՐՈՒԹԻԻՆԸ — Երբ մարմնիկներէ վարակուած թրթուրի մը հիւսկիները յարմարագոյն չափով մեծցնող (չոր օրինակ 500 անգամ) մանրադիտակով մը քննենք, հետեւեալները կը տեսնենք:


1. Յօրինումներու նշխարներ, մերթի, բճճային հիւսկէնի, ստեւներու ևն. ևն. բերաններ:

2. Անորոշ մեծութիւններով կտրած եւ գնդիկներ, բայց մեծ մասամբ խոշոր, որոնք կը տեղափոխուին իրենց կըտր ձեւը պահելով հանդերձ, երբ մանրադիտակի իրափակ (couvre objet) տակալին վրայ թեթեւ ճընշում մը տանք: Ասոնք ճարպօլային գնդիկներ են:

3. Օղալին պղզեղաններ:

4. Երբեմն՝ անկիւնները կըրցած քառանկիւնաձեւ բիւրեղներ: Երբ ճնշումով տեղափոխուին, ստոնք յայտնապէս կը տեսնուի որ տափակ են: Ասոնք «միլիտ»ներու բիւրեղներ են. Մալթիկի խողովակներէն յառաջ եկած (Պատկ. 42 Լ.)

Պատկ. 42 — Պղպեղախտի մարմնիկներու այլեւայլ ձեւերը.



Ա. Հաւկթակերպ փայլուն մարմնիկներ. — Բ. Տփղչն մարմնիկներ, մէջքնին դատարկիկներով. — Գ. Տանձակերպ մարմնիկներ կրկնակ չըջագծերով և հատիտներով. — Դ. Անջատ հատիտներ. — Ե. Բճիճներ. — Զ. Մալթիկի խողովակներու բիւրեղներ:

5. Վերջապէս «Մարմնիկ»ներ:

Սովորաբար, մարմնիկները՝ որոշ չըջագծով, փայլուն և հաւկթակերպ մարմնիկներու ձեւով կ'երեւին, գրեթէ ամէն ալ իրարու նման, առանց հիւսկէններու փակցած ըլլալու, որովհետեւ ամենախոքը չարժուժով մը կը դատուին անոնցմէ, եւ չըջապատ հեղուկին մէջ կը տարածուին: Առհասարակ Պառունեան չարժուժով օժտուած կ'երեւին, որ

մերթ կ'ընդհատի, մերթ ևս կը վերսկսի: Կատարելապէս միատարր կ'երեւին. թէեւ ուշադրութեամբ նկատուած ատեն մէջերնին պարունակութիւն մը կը նշմարուի, ճիշտ մարմնիկներու հաւկթակերպ ձեւով: Մարմնիկներու մեծ տրամագիծը հաւասար է վերի վերայ 2-3 հարիւրորդ հազարորդամերթի (Պատ. 42 Ա.) Մարմնիկներու ամենէն սովորական ձեւը այս է, զոր առաջին նայուածքով որոշակի կը տեսնուի: Բայց յաճախ մէկ ուրիշ ձեւ մ'ալ ունին, որ դժուարութեամբ կ'որոշուի: Նախադեմներն ալէս հաւկթակերպ են, բայց տփղչն եւ անխալ, չըջագծերնին հաղիւթէ կ'որոշուի, կամ աւելի մածիտային (göletineuse), «չաղղային» (sarcodique) երեւոյթով, մերթ իրարմէ անջատ, բայց յաճախ իրարու վրայ դիպուած և հիւսկէններու թանձրութեան մէջ զետեղուած կ'երեւին: Իրենց մէջ կը նշմարուի ընդհանրապէս մէկ կամ աւելի փայլուն փամփշտիկներ կամ դատարկիկներ (vacuole):

Ճիշդ փայլուն մարմնիկներու ձեւը և մեծութիւնը ունին այս տփղչն մարմնիկներն ալ, որոնց կ'ընկերանան ընդհանրապէս, և անոնց աւելի դեռատիւներն են: Երբեմն ալ աւելի երկար կ'ըլլան, և այնպէս կ'երեւի որ, իբր թէ երկու մարմնիկներ ծայր ծայրի իրարու կպած են, և իսկոյն պիտի բաժնուին (Պատկ. Բ):

Մարմնիկներու երրորդ ձեւ մ'ալ կայ տանձակերպ (Պատկ. Գ), կամ մեղրադդումի ձեւով, տփղչն և վերիններուն ալէս անորոշ չըջագծով, թէեւ գրեթէ սահմանող թաղանթը կրկնակ չըջագծով մը հաստութիւննին երեւան կը հանէ: Ուռուցիկ կողմի չըջագծին մասը բաւական որոշ կերպով կը տեսնուի, բայց բարակ կողմը, երթալով կը չփոթի, այնպէս որ՝ յայտնի իսկ կըլլայ թէ գոցուած է: Ասոնց մէջը պարփակուած նիւթը մերթ միատարր կ'երեւի ոմանց մէջ, մերթ ևս կ'նշմարուին մէկ կամ երկու հատիտներ (granuline) կամ մանրակորիզներ (nucléole), որոնք մերթ օժտուած կ'երեւին Պառունեան չարժուժով: Ուրիշ կ'հետեւի թէ չըջափակ նիւթը հեղուկ մ'է: Այս հատիտները երբեմն թութի կամ արքամորի ձեւով կ'երեւին. այսինքն՝ շատ մը հատիտներ մէկգմէկու կպած և իրարու վրայ դիպուած ըլլալին իբր թէ,

որ յաճախ մարմնիկներու ներքին կողմը փակ-
չած կ'ըլլան :

Այս տանձաձև մարմնիկները ամէնէն գոր-
ծօն արտադրիչները ըլլալ կը թուին . և ընդ-
հանրապէս իրենց մէջը գտնուող հատիտնե-
րուն պէս , իրենցմէ ածջատ շատ մը հատիտ-
ներ շուրջերնին կը գտնուին (Պատ. 9) :

Վերջապէս կը տեսնուի նաև տփգոյն
բճիճներ (Պատ. 9) . քիչ թէ շատ կանոնաւո-
րապէս կ'ըրցած , որոնց մէջ կը նշմարուի
որոշապէս կամ միատարր նիւթ մը , եւ կամ
քիչ շատ հատիտներ , մերթ չփոթ և անորոշ
դիրքով : Այս պարագային մէջ , եթէ պատ-
րաստութեան վրայ քիչ մը մանիշացեալ ջուր
(eau iodé) լեցուի , իսկոյն որոշակի կ'երեւին :
Այս հակադրակի ազդեցութեան տակ , բճիճ-
ները կը կծկին , հատիտները կը կարկամին ,
եւ ամէնը մէկէն կամ կեդրոնը կը ժողովեն ,
կամ բճիճին եզերքը : Երբեմն ալ բճիճներուն
մէջ հաւկթակերպ մարմնիկներու քիչ շատ
որոշ ձեւով մարմնիկներ կը տեսնուին , որոց
մէջ ալ կը գտնուին հատիտներ : Ուրկէ կը
հետեւի որ , տփգոյն և անջատ մարմնիկները
այս բճիճներուն մէջ կը կազմակերպին :

Գործնական տեսակէտով , հետազոտու-
թեանց մէջ պէտք է փնտռել միայն փայլուն
հաւկթակերպ մարմնիկներ , որոնց անպատ-
ճառ կը հանդիպիք պղպեղախտէ վարակուած
ենթականերու մէջ : Մինչդեռ միւս տարրերը
ընդհանրապէս չեն երեւիր , էթէ հետազո-
տութիւնը կը կատարուի ամբողջ միջատին
մարմինը տրորելով , եւ անկէ առնուած մէկ
մասին վրայ միայն : Երբ հետազոտութիւնը
դեռաւոր կծկի մը վրայ կը կատարուի , այն
ատեն պէտք է փնտռել տփգոյն մարմնիկ-
ներու ձեւերը . թէեւ ասոնք յատուկ կեր-
պով որոշել դժուար է , մանաւանդ սկսնակ
մանրադէտներու համար , բայց ուշադիր հե-
տազոտութեամբ յաճախ կարելի կ'ըլլայ
գտնել զանոնք , մանաւանդ երկարատեւ փոր-
ձառութիւնով : Այս տփգոյն մարմնիկները
յատակօրէն որոշելը դժուար ըլլալուն պատ-
ճառը այն է որ , արտադրիչ , այսինքն՝ սե-
րնդաւորող մարմնիկներ ըլլալովն յաճախ
ձեւերնին կը փոխուի , ինչպէս տեսանք վե-
րը . մինչդեռ փայլուն մարմնիկները այլ եւս
իրենց դերը վերջացած և անգործութեան
դատապարտուած յօրինուածներ ըլլալուն

այլ ևս , ձեւերնին որոշակի կը պահեն :

Ինչպէս տեսանք , մարմնիկները միջատին
բոլոր հիւսկէններուն մէջ ալ կը գտնուին ,
ուստի հետազոտութեան համար երբեք հարկ
չիկայ , միջատին մարմնոյն այս կամ այն մա-
սին նախապատուութիւն տալով , կտրտել և
մաս առ մաս քննութեան ենթարկել : Սովո-
րական քննութեանց համար կը բաւէ միայն
միջատը սանդղին մէջ 2—3 կաթիլ ջուրով
տրորել , եւ այդ խառնուրդէն միայն կա-
թիլ մ'առնելով քննութեան ենթարկել :

Իսկ երբ թիթեռնիկի մը վարակման աս-
տիճանը որոշել ուզուի , այն ատեն ամենէն
լաւ միջոցը , մանրադէտակի միջավայրին մէջ
գտնուած մարմնիկներու թիւը հաշուելն է ,
երբ շատ մը թիթեռնիկներ իրարու ետեւէ
քննել հարկ ըլլայ , և բազմաթիւները մօտա-
ւորապէս ճշդօրէն կատարած ըլլալու համար ,
իւրաքանչիւր թիթեռնիկի համար գործա-
ծուած ջուրի քանակութիւնը , պէտք է
զգալապէս միեւնոյն չափով ըլլայ : Ահա ասոր
համար , սովորաբար մանրադէտները իրենց
յախճապակիէ սանդղ կը լուան , կը կաթկըթ-
ցունեն , եւ ասանց չորցնելու , թիթեռնիկը
կը տրորեն մէջը : Սանդղին եզերքները միա-
ցած ջուրը կը բաւէ թիթեռնիկին հիւսկէն-
ները թրջելու . եւ այս կերպով վարուելով ,
եզերքները մնացած ջուրը շարունակ հաւա-
սար կ'ըլլայ իւրաքանչիւր գործողութեան
մէջ , եւ թէ միեւնոյն ատեն ալ ժամանակի
խնայողութիւն մը կատարուած կ'ըլլայ :

(Ե-բ.)

Ղ. FOLUS


ՀԱՐՑՈՒՄ 59 ԵՒ 60

Պ. Արմէն Նեմցէ հետեւալ հարցումը կ'ուղղէ մեզ .
Ներկայիւս կը խնդրուի որ բարեհաճիք
հրատարակել պատուարժան գիտական հան-
դիսնուդ մէջ բողկի զանազան տեսակներու
մշակութեան եղանակը . որովհետեւ մէկ եր-
կու տեսակներ կան որոնք չեն յաջողիր մեր
պարտէզներուն մէջ , այսինքն գլուխ չեն
կապեր , այլ միայն ծիւրեր կ'արձակեն , մանա-
ւանդ կարմիր բողկը :

Այս առթիւ կը խնդրուի նաև որ հաճիք
հրատարակել շահրքամի (œillet) մշակու-
թեան եղանակը մանաւանդ double (խաթ-
մէլի) տեսակները հասցնելու միջոցները :

‘ՀԱՆՐԱԳԻՏԱԿ,,Ի

ՎԱՅՆԵԼՉԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԸ




«Հանրագիտակ»ի ընթերցողներէ շատեր անհամբեր Վայելչազարդութեան Բաժնի հրատարակութեան կ'սպասեն, և կը թախանձեն մեղի, որ առաջ ձեռնարկել այդ օգտակար ճիւղին: Մենք իրենցմէ աւելի կը փափաքինք կարելի եղածին չափ շուտ սկսիլ, բայց սկսելու համար պէտք է որ անպատճառ մեր պահանջած 300 բաժանորդներու թիւը լըրանայ, որպէս զի մենք ալ վստահօրէն ճամբայ ելլենք: Ուստի անոնք որ կը փափաքին ժամ առաջ վայելչազարդութեան հայաբարբառ առաջին թերթը ըյս ընծայուած տեսնել, պէտք է որ իրենք ալ իրենց ծանօթներուն և բարեկամներուն այժմէն յանձնարարեն բաժանորդ արձանագրուիլ: Այժմէն արձանագրուելով իրենցմէ մենք կանխիկ դրամ չենք պահանջեր. և երբ այս կէտին վրայ այսչափ կը ծանրանանք, միմիայն վստահ ըլլալու համար է որ, գէթ այդչափ բաժանորդ պիտի կրնանք ունենալ, թերթին յարասեւութիւնը ապահոված ըլլալու համար:

Յանձնարարեցէք ուրեմն ամէն տեղ, որ այժմէն բաժանորդ արձանագրուին, որու համար բաւ է միայն պարզ թուղթի մը վրայ՝ թերթիս ՅԷ երեսը գըտնըւած զեկուցագրին մէկ օրինակը գրել և ստորագրելով մեզ զրկել:

Անոնք որ կը կասկածին պատկերներու կամ պարունակութեան յաջողութեան մասին, և այդ պատճառաւ չեն ուզեր այժմէն արձանագրուիլ, այդպիսիները կրնան հրատարակուելէն երկու չաբաթ վերջը իրենց ստորագրութիւնը յետս ուղել, և բաժանորդութենէ դադրիլ: Ահա՛ այս կերպով ամէն կասկած փարատած կ'ըլլանք և հրաւեր կը կարգանք որ ջանան վաղ ընդ փոյթ արձանագրութեան ցանկը լրացնել:

ՈՐՈՎԱՅՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ



ՈՐՈՎԱՅՆԱԽՕՍ ԸԼԼԱԼՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԸ



(Դ-ր-ւ-լ-ւ-թ-ի-ն Դ-ի-ն 34)

Ե.

Որովայնախօսութեան արուեստը հոգեկան գ չառներ. ցոյց տուինք հեռուէն եկածի պէս ձայներ արձակելու միջոցները, բայց պէտք է նաև տալ պատրասնքը թէ՛ կուգան անոնք ձեղունէն կամ գետնէն, այսինքն վերէն կամ վարէն:

ԸՍՏ ԵՐԵՒՈՒԹԻՒՆ ՎԵՐԷՆ ԵԿՈՂ ԶԱԹՆԵՐ.— Այս արդիւնքը ձեռք բերելու համար, միշտ կը գործածենք հեռաւորութեան պատրասնքը տուող մասնաւոր ձայնը. սակայն ձայները փոխանակ բերնին խորը կազմելու, զանոնք կ'արձակենք, ընդհակառակն, քիմքին բարձրը, և երբ զանոնք այսպէս կը հանենք, կատարելապէս կը զգանք թէ՛ քիմքին վրայ է արձակուած օդը: Եթէ փափաքինք ցածցնել կամ մօտեցնել այն տեղը՝ ուսկից կը կարծենք թէ՛ կուգան ձայները, կ'արձակենք ձայնը քիմքին գիմացը և նորէն կը դարձնենք բերնին խորը, պարագաներուն համեմատ:

	1	2	3
16			4
15			5
14 Ա.		Ո	6
13			7
12			8
	11	10	9

Պատկեր Ա.

Երբ կ'ուզենք որ ձայն մը ըստ երևութին գայ բարձր տեղէ մը, պէտք է գլուխնիս ուղղենք վեր:

ԸՍՏ ԵՐԵՒՈՒԹԻՒՆ ՎՈՐԷՆ ԵԿՈՂ ԶԱԹՆԵՐ.— Առաջինին նման է, բայց ձայնը ելնելու է կոկորդին խորէն ո՛չ թէ քիմքէն: Երկնցուցէք վիզերնիդ իր բոլոր երկայնութեամբը, և ցորչափ կը փափաքիք որ ձայնը աւելի խորունկ տեղէ մը գայ, ցածցուցէք

վիզերնիդ և ծագեցէք մինչև որ ծնօտնիդ ձեր լանջքին կրթնի:

Նոր սկսողին մեծագոյն դժուարութիւնն է, հասկնալ ճշտօրէն ձայնական կարողութիւններուն ոյժը, երբ նկարագրուած երկու եղանակներն ալ գործածենք:

Ասիկա կարելի է սովորիլ փորձերը կրկնելով, պիտի հասկնանք նաև ձայներու ուժ-գնութիւնը, կարենալ ճշդելու համար անոնց ուղղութիւնը և հեռաւորութիւնը:

Հեռաւոր ձայներ նմանցնելու համար երկար ատեն չպիտի կրնանք յանձնարարել ականջնիդ գոցել ուժեղ կերպով:

Արտաքին կողմի աղմուկները պիտի նուագին, որպէս թէ շատ հեռու տեղէ մը գային: Այն ատեն րոնք մէկ քանի բառեր, անոնք պիտի հասնին ձեր ականջին տկարացած, իրեք թէ հեռուէն ըսուէին: Վար առէք ձեռքերնիդ և կրկնեցէք միւսնոյն բառերը և պիտի իմանաք տարբերութիւնը: Ուժգնութեան զանազանութիւնները կատարելապէս բմբռնելու համար նորէն սկսէք, և հեռաւոր ձայները հասկնալու համար ձեր գործարանները որոշեալ դիրքի մը մէջ դնելէ ետք, փորձեցէք կրկնել նոյն խօսքերը: անոնք պիտի հասնին ձեր ականջին նոյն Ուժգնութեամբ, որով կ'իմանայիք սովորական ձայնով արտասանուած առջի բառերը, երբ խցուած ականջներ ունէիք:

Չէ հնար երկար ատեն ուշադրութիւն դարձնել ձայներու և ասոնք լսել տալու զանազան ձևերու այս ուսումնասիրութեան վերայ, վասն զի մեր սովորեցուցած արուեստին զաղտնիքը, անգլիացի հեղինակի մը յոյժ գեղեցիկ ըսածին պէս, հասկնալն է թէ ի՞նչ որ է որովայնախօսութիւնը ականջին համար, նոյնն է հեռանկարը աչքին համար: Երբ գեծագրութիւն մը կը դիտենք, որուն վրայ առարկաներ սովորականներէ աւելի մեծ հեռաւորութեամբ կը տեսնուին, ապահով գիտենք թէ արուեստագէտին ճարտարութիւնն է որ կ'երևցնէ թղթի թերթին վրայի առարկաները այնպէս՝ ինչպէս որ են իրօք: Նոյն կերպով որովայնախօսութիւնը կ'ազդէ ականջի վրայ և զայն կը պատրէ ձայներ հանելով՝ որ կարծես կուգան որոշ հեռաւորութենէ մը:

(Ե-բ.)

ՄԻՂԲ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր կրօնական ամուլ ու անտարբեր դասուն մէջ այնքան քիչեր ունինք իրենց կոչումին արժանի, որ մարդ ճշմարիտ հրճուանք ու սփոփանք կը զգայ երբ կը տեսնէ անոնց մէջ կրօնականներ, որոնք իրենց պարտաճանաչութեան ու անձնուիրութեան համար միայն կը վարձաւորուին: Այս կարգէն է Տ. Եղիշէ Վ. Դուրեանի եպիսկոպոսացումը՝ զինքը մօտէն ճանչցողները կամ հեռուէն համբաւը լսողները՝ հաւատարմապէս անկեղծ ու ճշմարիտ հաւատք մը ունին իր բարոյական ու մաաւորական արժանիքներուն վրայ: Դուրեան անաղարտ ու անբաւիր համբաւ կը վայելէ. անոնցմէ չէ որոնց անուան շուրջը թեր ու դէմ, նըպաստաւոր ու աննպաստ, երկդիմի կարծիքներ կը չլջին: Իր իմաստասիրական լայն հմտութիւնն ու հոգին զինքը հեռու պահած են ճշմիտ հաշիւներէ. իր բաղմանկողմանի ու լայն զարգացման հետ իր մէջ կը կրէ անձնուիրութեան, օգտակար ըլլալու ոգին, բան մը որ հաղուադէպ է մեր կրօնականներուն մէջ, մէկ խօսքով Դուրեան Եպիսկ. եղական գէմք մըն է մեր եկեղեցականներու աննպաստակ խումբին մէջ: Ս. Հայրապետը զինքը ձեռնադրած միջոցին պէտք չէ տեսեր զինքը ներկայացնելու. ամենուն ծանօթ ու սիրելի մեր Դուրեան գիտնական և ուսեալ վարդապետն է, ըսելով: Եթէ երբեք զինքը մեղադրելու պատճառ մը ունինք, սա՛ է թէ ալ իր գիտական ու գրական ներհուն ու կուռ յօդուածները չենք կարդար թերթերուն մէջ. փափաքելի էր որ իր ծանր զբաղումներէն քչիկ մը ժամանակ գողնար հայ գրականութեան ու գիտութեան նուիրելու: Մեզի համար ճշմարիտ վայելք մը պիտի ըլլայ ատիկա: Ուրեմն շնորհաւորելով իր եպիսկոպոսացումը՝ կը

մտղթենք որ ա՛լ աւելի բարձր դիրքեր գրաւէ եկեղեցական նուիրապետութեան մէջ :

—Տիրապէքիրի մէջ գերման միսիոնարներ նոր Որբանոցի մը բացումը կատարեն են, հարիւրի չօփ որը ընդունելով : Այդ միսիոնարութեան մէկ ճիւղն է Ուրֆայի Որբանոցը :

—Գերման բանասէր-հրատարակիչ Մ. Արթուր Լէյթ սկսած է Հայ բանասիրականներու գերմաններէն թարգմանութիւնը հրատարակել : Հայ բանաստեղծներու վրայ հրատարակուած հատորը լաւ ընդունելութիւն գտեր է գերմանացի բանասէրներու մէջ : Նոր հատորները յաջորդաբար իւրոյ ընծայել կը խոստանայ բանասէրը :

—Լազարեան ճեմարանի Տնօրէն կարգուեր է ուռն մը, որ դպրոցին տարեկան հանդէսին մէջ խօսելով մարմնամարզի պէտքին վրայ դպրոցներուն մէջ, առարկեր է թէ Լազարեան ճեմարանին մէջ բնա՛ւ կարեւորութիւն չի տրուիր այդ ճիւղին, բան մը որ խիստ ցաւալի է. և ինք մեծ ուժ տուեր է եղեր այդ ճիւղին :

—Ս. Պատրիարք Հայրը անցած շաբաթ օր Ոստիկանութեան Դուռն երթալով տեսակցեցաւ Վսեմ. Նախարարին հետ :

—Ամենայն Հայոց Հայրապետը երկու տալիս առաջ խնդրագրով դիմում ըրած էր Ռուսաց Զարին՝ դպրոցական խնդրին աւելի մեղմ լուծում մը տալու : Վերջերս Էջմիածին հասած պաշտօնական թուղթ մը անփոփոխելի կը յայտարարէ Հայ վարժարաններու նկատմամբ տըրուած որոշումները :

—Տիգրիս հրատարակուող ԼՈՒՄԱՅ հանգէնը ձեռնարկած է հրատարակել Պոլսահայ ծանօթ երգիծարան Պարոնեանի երկատիրութիւններէն՝ «Ծիծաղ» ու «Արեւելեան Աստաճաբոյժը» : Գրասէրներուն աչքը ընչա՛ :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնական հեռագիր մը կը յայտարարէ թէ Վանի նահանգին ու քաղքին մէջ ունէ անկարգութիւն պատահած չըլլալով, հետեւաբար կեանքի ու ինչքի կորուստ չկայ. և կատարեալ խաղաղութիւն ու անդորրութիւն կը տիրէ ամբողջ կուսակալութեան մէջ :

—Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ հելլենական պատերազմի չքաղրամ շնորհել Տպագ. Տեսչութեան Դիւանապետ ու Գրաքննիչ Պառնասեան Պօղոս Էփ.ի ու Հայ լրագրիչներու Գրաքննիչ Մինաս Էփ.ի :

—Երկրագործական նախարարութեան լրկած հրահանգներուն վրայ՝ գաւառներու հողագործները տրամադրութիւն ցոյց կուտան իրենց արտերուն մէջ նոր արմոխքներ յառաջ բերելու : Այսչնի կուսակալութեան մէջ ժողովուրդը համոզուելով այդ բոյսերուն գերազանց օգտակարութեանը մասին, սկսած է իր արտերուն մէկ մասը յատկացնել կանճրակ, (քօլպա) գետնախնձորի մէկ քանի նոր տեսակներ մշակելու : Գոնեայի նահանգին մէջ ալ բամպակ, չաքարեղէգ, սուրճ մշակելու փորձեր կը կատարուին :

—Կայս. կառավարութեան ու Յոռնաստանի միջեւ կեքելի հիւպատոսական պայմանագրութեան համար բանակցելու պաշտօն ունեցող Յանձնաժողովը ի նիստ գումարեցաւ Բ. Դրան մէջ :

—Օտարազգիներու ծառայութեան մէջ գտնուող օսմ. հպատակներու ունեցած արտօնութեանց մասին Դատական Նախարարութիւնը հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ. Օսմ. այն հպատակներ որոնք դեսպանական կամ հիւպատոսական թարգման, քարտուղար կամ սպասաւոր են, կրնան պաշտպանեալի արտօնութիւններ վայելել, բայց միայն իրենք և ոչ իրենց ազգականներն ու սարսաղները. բայց պարտաւոր են իրենց քաղաքացիական ու վիճակորական տուրքերը վճարել :

—Հանրօգուտ Ծինութեանց Նախարարութեան պաշտօնատան մէջ յանձնաժողով

մը կազմուած է, որուն նպատակն է ուսումնասիրել թէ երկտրականութիւնը կարելի է իբր շարժիչ ուժ գործածուիլ մեքենաներու համար:

— Մարտուանի Շուկային մէջ հրդեհ ծագելով երկու հարիւր կտորէ աւելի չէնքեր այրեցան: Նիւթական մեծ ֆնաս կայ:

— Այս տարի անձրեւի նուազութեան պատճառով թուրքիոյ գրեթէ ամէն կողմերը երաշտութիւն կը տիրէ. երկրագործ դասակարգը մոմտուքի մէջ է: Այտընի նահանգին մէջ այն աստիճան երաշտութիւն կը տիրէ որ բոյսերը մեծապէս ֆնասուած են: Էտիր-նէի մէջ ալ տիրող երաշտութեան պատճառով եգիպտացորենի բերքը շատ յաջող է այս տարի: Էտիրնէի կուսակալութիւնը առաջարկեց Բ. Դրան՝ 500 կառք եգիպտացորեն բերել տալ Պուկարիայէն: Պոլսոյ մէջ ալ երաշտութիւնը զգալի է. ժողովուրդը խմելու ջուրի դժուարութիւն կը քաշէ:

— Ոստիկանութիւնը հրամայեց ամուրի պանդուխտներու սենեակներ վարձու չտալ այն տուններուն մէջ ուր ընտանիքներ կը բնակին եւ այն թաղերուն մէջ ուր իսլամներ կը գտնուին, սա մտածումով թէ կրնան կարգ մը անպատեհութիւններ ծագել:

— Գոսովայի և Մանասթըրի նահանգներուն մէջ բարեփոխումներ ներմուծելու համար մեծ յանձնաժողով մը պիտի կազմուի, որ մատուցուած՝ բարենորոգման այլևայլ առաջարկները քննելով, գործադրութեան պիտի դնէ:

— Օտար երկիրներու օսմանեան հիւպատոսարաններուն ազգու հրաման ղրկուեցաւ որպէս զի թուրքիա եկող ուղևորներուն անցագրերը ուղադրութեամբ նայուին:

— Ներքին Գործոց Նախարարութիւնը հրամանագիր մը յղեց գաւառական իշխանութեանց, ազգայնաբերով որ ապահովագրական գործակալութեանց բացումը չարտօնեն, եթէ արտօնագիր չունենան իրենց ձեռքը:

ՎՐԻՊԱԿ

Նախորդ 34րդ թուին 22րդ Հանելուկին մէջ «ծառ» բառը պէտք է կարդալ «տառ»: Իսկ 543րդ էջին երկրորդ սիւնակին 22րդ տողը պէտք է կարդալ. «ո՛ր և է մարմին մը մէկ մէթը վեր բարձրացնելու»:

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԽՆԴԻՐ ԻԱ.

Բազմապատկութեան աղիւսակի մը մէջ ամենէն մեծ թիւը քանի՞ կ'ըլլայ, երբ բովանդակ թիւերուն գումարն է 29241:

S. ՊՕՁԱՃԵԱՆ

ԼՈՒՄՈՒՄ ԺԵ. ԽՆԴԻՐԻՆ

Ժե խնդիրը՝ որով երկու տարբեր զօրութեամբ լոյսերու մէջ առարկայ մը դնել կ'ուզուէր, այնպէս որ առարկային երկու երեսներն ալ հաւասարապէս լուսաւորուին:

Լուծեր են՝

Պրք. Երուանդ Մ. Տէօյիւճեան, աշակերտ Վիէննայի Միլիթարեան Վարժարանին ի Բանկալթի:

Գ. Շահինեան, Ագ-Հիսար:

Պատ. — Լամբարէն 3,55 մէթր հեռու
» Մոմէն 1,45 » »

Շատեր այնպէս կը հաւատան թէ Պոլսոյ հրապարակին վրայ ՃՇՄԱՐԻՏ և ԱՆԽԱՐԴԱԽ Մօռիւ ձկան իւղ չի գտնուիր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թող դիմեն Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Տեաքց Դեզօրէից վաճառատունը: Փընտղեան Խանի տակ թիւ 3, ուր պիտի գտնեն ուղղակի նորմէկիայէն բերել տրուած ամենալնտիր ձկան իւղի տեսակներ: Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ դիւրամատչելի գիններով:

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'ստորագրէ յի միայն Տնօրէն-Նմբագրապետ Ղ. ԲՈՂԱՏ, որու դիմել պէտք է, առանց բացառութեան, թերթիս վերաբերեալ ամէն գործառնութեանց համար:

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



ՀԱՃՈՅՔ ՄԸ

ՈՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՌԻ

Ճշմարիտ հաճոյքն այն է որ, ախորժելի ժա-
մանց մը ընծայելով հանդերձ, առողջութեան
ալ մեծապէս կ'օգնէ: Ներկայ դարուս մէջ հա-
ճոյքի նիւթերը բազմաթիւ են. սակայն զար-
գացած ազգեր ամենէն աւելի թիջին նա-
խապատուութիւն կուտան, անոր համար որ,
այս թանկագին ըմպելիին ամենածանր յոգ-
նութիւնները շուտով կ'անցնէ և նոր կորով
կը ներշնչէ, մարդուս ձգած աշխատութիւնը
վերակսելու: Ձմեռը արիւնը տաքցնելով, մար-
մինը ցուրտին դէմ կը պաշտպանէ՝ ամառն
ալ զովութիւն ընծայելով, շատ մը հիւան-
դութեանց առաջը կ'առնէ: Խնամով պատ-
րաստուած գաւաթ մը թէյը, նոյնչափ մսի
ջուրի հաւասար անունդ կը պարունակէ և իր
անբաղդատելի ածնութեամբ կատարեալ նա-
խախնամութիւն սընէ մարդկութեան համար:
Սակայն աւաղ որ թիջ անուամբ ծախուած-
ներու մեծագոյն մասը խարդախուած ըլլա-
լով, զուրկ են այս առաւելութիւններէն և զա-
նոնք ճանչնալն շատ դժուար է, ուստի անոնք
որ կը փափաքին ԸՆՏԻՐ, ԱՆԽԱՐԴԱՆ և միւ-
նոյն ատեն ԱՌԱՆ Թէյ խմել, պէտք է Կ.
ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿԵՐՑ
թէյերը գործածեն. ուղարկութեամբ փրկա-
նելով անոնց անունն ու մասնանիքը տուփե-
րու վրայ: Որովհետեւ թէյի այս մեծ վաճա-
ռատուն, իւր երկարամեայ փորձառութեամբ,
արեւելեան երկիրներէ մեծաքանակ թէյ սր-
տածելուն և ահագին ապրանքներ սպառելուն
չնորհիւ, միշտ անխարդախ թէյ կը ծախէ
ԱՆՄՐՑԵԼԻ գիներով: Ընկերութեան կեդրո-
նատեղին է Կ. Գօլիս, Ճէլալ Պէյ խոտ, Թիւ 10:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ Կը ծանու-
ցանէ թէ Մանկավարժական Քերականու-
թեան Գ. մասը տպագրութեան յանձ-
նուած է:

Մայսթերսչափ Սիսթէմի Գաղղիե-
րէն մասի ԺԱ. տետրը հրատարակուած
է և բաժանորդագրութիւնը փակուած:
Գին 12 տետրերու 25 զրուշ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոչտոյ եւ Գաւառաց հաւաք	
Հանրագիտակ տարեկան	50 զր.
» Վայելչագարդութեան բաժինով	80 »
Հանրագիտակ միայն Վայելչագարդու- թեան բաժինն	60 »
Հանրագիտակ Վայելչագարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	110 »
Արտաւաճառի հաւաք	
Հանրագիտակ տարեկան	15 ֆր.
» Վայելչագարդութեան բաժինով	20 »
Հանրագիտակ միայն Վայելչագարդու- թեան բաժին	16 »
Հանրագիտակ Վայելչագարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	25 »

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ
ՎԱՅԵԼՉԱԳԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

2. ԲՈԼԱՏ

Խմբագրապէս Հանրագիտակ Հանդէսի

Թիւ 19 Էսկի-Չապթէյէ

Կ. Պոլիս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրագուտ ձեռնարկը,
հաճեցէք զիս բաժանորդ արձանագրել թեր-
թիդ վայելչագարդութեան բաժինն
.

Ստորագրութիւն
(Ընթերցելի)

1898

Բնակութեան տեղ
Հասցէ

Մ Ե Ր Շ Ա Ս Ց Է Ն

Կը խնդրուի թերթիս հետ առնչութիւն ունեցող ամեն անձերէ (գործակալ, բաժանորդ, ևն.) որ բարեհաճին իրենց թղթակցութիւնները ուղղել հետեւեալ հասցէին, ԱՌԱՆՅ ՈՒՐԻԾ ՈՒ ԵՒ Է ՄԻՋ-ՆՈՐԴԻ. հակառակ պարագային, եթէ անպատեհութիւններ տեղի ունենան, ամեն դանդատ անխելի մնալով, պատասխանատու չենք ըլլար:

در علیہ دہ بفتحہ قیوسندہ اسکی ضبطیہ دہ
صوباجی پارسغ افدینک ۱۹ نومرو لی دکانندہ
«مجموعہ علوم» غرضی سر محرری (پولاد) افندیہ

Ղ Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,"
Chez M. Parsegh Hazarossian
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

Մ Ե Ր Մ Թ Ե Ր Ա Ն Ո Ց Դ Ե Ղ Օ Ր Է Ի Ց

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ ՖՆՏՔԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիքներ, Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար զներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք դաւառաց համար, որոնց կը շրջեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:



ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզնում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճեանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կ. Կտաճեան
Մալխարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէչիչեան
Թրեպոլի. — Գալուստ էֆ. Գըլքեան
Սինոպ. — Յ. էֆ. Պետրոսեան

Կիրասուն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
Մարաշ — Արթ. Տ. Յովհաննէս քահանայ
Վարժապետեան
Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Պանսքումա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Սըվազ. — Յ. էֆ. Գարակէօզեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէքճեան
Կիլիպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանիսա. — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆիոն-Գարա-Հիսար. — էֆ. Արտաչո էֆ. Հալէպեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մագրի-Գիւղ, Պօղոս էֆ. Ազնաւորեանի խանութը:
Դատը-Գիւղ, Լեւոն էֆ. Չպուքճեան Դեղարանը:
Բերա, Դեմ փողոյ Դառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: